ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/309

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.11.2021թ. թիվ 26/26-1/19006-2021 գրությամբ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին և Սարգիս Պողոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չուեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 15.11.2021թ. թիվ 01/61-28210 գրության հիման վրա, 22.11.2021թ. թիվ 26/26-1/19006-2021 գրությամբ նախաձեռնել է «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին և Սարգիս Պողոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի և Սարգիս Պողոսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի և Սարգիս Պողոսյանի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշումներ չեն ներկայացվել:

«Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն և Սարգիս Պողոսյանը, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 26.11.2021թ. ժամը 09:20-ին և 23.12.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չեն ապահովել իրենց ներկայացուցիչների մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.11.2021թ. թիվ 01/61-28210 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում մասնակցության հայտեր են ներկայացվել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի և Սարգիս Պողոսյանի կողմից (այսուհետ՝ Մասնակիցներ):

Վերը նշված գնման ընթացակարգի հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովը Մասնակիցների կողմից ներկայացված՝ հրավերով սահմանված փաստաթղթերում արձանագրել է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 41-րդ կետի համաձայն առաջարկվել են շտկել այն, սակայն վերջիններիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով Մասնակիցների հայտերը մերժել է:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի

պահանջներով, առաջարկում եմ Մասնակիցների նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 26.11.2021թ. ժամը 09:20-ին և 23.12.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/309 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/309 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն և Սարգիս Պողոսյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.11.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը.

- ««Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում լրացվել է 3.1 կետը՝ նշելով 100% պետության կամ համայնքի մասնակցություն, 3.1 կետի լրացման անհրաժեշտությունը ստուգել, 4.6 կետը անհրաժեշտ չէ լրացնել, վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտին, ներկայացված թիվ 1.1 հավելվածում և համակարգում 6-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ և 21-րդ չափաբաժիններում «ֆիրմային անվանումը» սյունակում անհրաժեշտ է նշել ապրանքի ֆիրմային անվանումը՝ օրինակ Արզնի կաթ կամ այլն, և ոչ ապրանքի անվանումը, իսկ «ապրանքային նշանը» սյունակում նշել ապրանքային նշան, եթե առկա է:
- «Սարգիս Պողոսյանի ներկայացված թիվ 1.1 հավելվածում և համակարգում բացակայում է ներկայացվող ապրանքի բնութագիրը, արտադրողի անվանումը, ինչպես նաև կցված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, որի օրինակելի ձևը կցված է համակարգում»:

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը որոշել է օրենքով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով մինչև 10.11.2021թ.

կասեցնել նիստը և տեղեկացնել վերջիններիս՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի և Սարգիս Պողոսյանի կողմից ներկայացված հայտերը գնահատվել են անբավարար հետևյալ հիմնավորմամբ.

• ««Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չի լրացվել «ֆիրմային անվանումը և «ապրանքային նշանը» սյունակները՝ դրվել է գիծ, որը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, սույն ընթացակարգի թիվ 4 արձանագրության 1.1 կետով նշվել էր «ֆիրմային անվանումը» սյունակում անհրաժեշտ է նշել ապրանքի ֆիրմային անվանումը»՝ օրինակ Արզնի կաթ կամ այլն և ոչ ապրանքի անվանումը, իսկ «ապրանքային նշանը» սյունակում նշել ապրանքային նշան, եթե առկա է»: Ընդունել ի գիտություն, որ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում լրացված 3.1 կետը թողնվել է անփոփոխ, որով նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում պետական մասնակցությունը կազմում է 100%:

• Սարգիս Պողոսյանի կողմից կրկին չի ներկայացվել ապրանքի ընդհանուր նկարագիրը»:

5. «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից 10.12.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/108 իրավապարտադիր որոշում, որի համաձայն՝ պարտավորեցվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը և ընդունել շտկման ծանուցում ուղարկելու մասին որոշում:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.11.2021թ. թիվ 26/26-1/19006-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 15.11.2021թ. թիվ 01/61-28210

գրությունը և կից փաստաթղթերով, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից 10.12.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/108 իրավապարտադիր որոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված

դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն և Սարգիս Պողոսյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.11.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը.

- ««Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում լրացվել է 3.1 կետը՝ նշելով 100% պետության կամ համայնքի մասնակցություն, 3.1 կետի լրացման անհրաժեշտությունը ստուգել, 4.6 կետը անհրաժեշտ չէ լրացնել, վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտին, ներկայացված թիվ 1.1 հավելվածում և համակարգում 6-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ և 21-րդ չափաբաժիններում «ֆիրմային անվանումը» սյունակում անհրաժեշտ է նշել ապրանքի ֆիրմային անվանումը՝ օրինակ Արզնի կաթ կամ այլն, և ոչ ապրանքի անվանումը, իսկ «ապրանքային նշանը» սյունակում նշել ապրանքային նշան, եթե առկա է:
- «Սարգիս Պողոսյանի ներկայացված թիվ 1.1 հավելվածում և համակարգում բացակայում է ներկայացվող ապրանքի բնութագիրը, արտադրողի անվանումը, ինչպես նաև կցված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, որի օրինակելի ձևը կցված է համակարգում»:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը որոշել է օրենքով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով մինչև 10.11.2021թ. կասեցնել նիստը և տեղեկացնել վերջիններիս՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի և Սարգիս Պողոսյանի կողմից ներկայացված հայտերը գնահատվել են անբավարար հետևյալ հիմնավորմամբ.

- ««Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չի լրացվել «ֆիրմային անվանումը և «ապրանքային նշանը» սյունակները՝ դրվել է գիծ, որը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, սույն ընթացակարգի թիվ 4 արձանագրության 1.1 կետով նշվել էր «ֆիրմային անվանումը» սյունակում անհրաժեշտ է նշել ապրանքի ֆիրմային անվանումը»՝ օրինակ Արզնի կաթ կամ այլն և ոչ ապրանքի անվանումը, իսկ

«ապրանքային նշանը» սյունակում նշել ապրանքային նշան, եթե առկա է»: Ընդունել ի գիտություն, որ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում լրացված 3.1 կետը թողնվել է անփոփոխ, որով նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում պետական մասնակցությունը կազմում է 100%:

- Սարգիս Պողոսյանի կողմից կրկին չի ներկայացվել ապրանքի ընդհանուր նկարագիրը»:

Այսպիսով՝ ամփոփելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից 10.12.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/108 իրավապարտադիր որոշում, որի համաձայն՝ պարտավորեցվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը և ընդունել շտկման ծանուցում ուղարկելու մասին որոշում, այն հիմնավորմամբ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները (3.1 կետի լրացման անհրաժեշտությունը ստուգել, 4.6 կետը անհրաժեշտ չէ լրացնել, անհրաժեշտ է նշել ապրանքի ֆիրմային անվանումը՝ օրինակ Արզնի Կաթ) անհասկանալի են, հստակ չեն ու չեն ելնում Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրությների պահանջներից, որպիսի պայմաններում շտկման մասին ուղարկված ծանուցմամբ (արձանագրությամբ) հայտնաբերված անհամապատասխանությունների անհստակություն ու վերացական լինելն օբյեկտիվորեն զրկել է «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորությունից, որպիսի հանգամանքը հանգեցրել է Կարգի 41-րդ կետի խախտմանը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է</u>, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:***

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 26-րդ կետի

համաձայն՝ ***Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:***

Նույն կարգի 27-րդ կետի համաձայն՝ ***Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:***

Վերոնշյալ իրավական կարգավորումների և փաստական հանգամանքների հիման վրա արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ իրավապարտադիր որոշմամբ արդեն իսկ դադարեցվել է ՍՑ-ՆԳ-2021/309 ծածկագրով ընթացակարգը նախաձեռնելու համար հիմք ծառայած Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Անդրադառնալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Սարգիս Պողոսյանի հայտը մերժելու մասին որոշմանը՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ վերջինիս հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Սարգիս Պողոսյանի կողմից կրկին չի ներկայացվել ապրանքի ամբողջական նկարագիրը, որի մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը,***

իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Սարգիս Պողոսյանը Կարգի 41-րդ կետի համաձայն 08.11.2021թ. eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցվել է հայտում առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում չի շտկել, այն է՝ չի ներկայացրել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերությամբ պահանջվող ապրանքի ամբողջական նկարագիրը, որը հանգեցրել է Ընթացակարգին Սարգիս Պողոսյանի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ Սարգիս Պողոսյանը «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են

վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.11.2021թ. թիվ 26/26-1/19006-2021 գրությամբ՝

1. «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

2. Սարգիս Պողոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և վերջինիս ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**